

4.2.2. Մարդասիրական օգնություն

Ըստ ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության տվյալների, 2019թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարդասիրական օգնության կարգով Արցախի Հանրապետություն են ներմուծվել 662579.4 հազ. դրամի ապրանքներ: Ստացված մարդասիրական օգնության 65.7 տոկոսը կազմել են դեղորայքը և բժշկական տարբեր ապրանքները, 17.0 տոկոսը՝ տարբեր տեսակի ապրանքները, 8.0 տոկոսը՝ զանազան շինանյութերը, 5.3 տոկոսը՝ մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմները և այլն:

ԱՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ առանձին ապրանքախմբերի

	2018թ. հունվար-սեպտեմբեր	2019թ. հունվար-սեպտեմբեր	Աճի տեմպը (%)
Ընդամենը	157 529,2	662 579,4	4,2 անգ.
<i>այդ թվում՝</i>			
Փայտեղեն և նրանից պատրաստված արտադրանքներ	82,9	-	-
Քիմիական արդյունաբերության և նրան առնչվող ճյուղերի արտադրանքներ	-	6 223,3	-
Նոր կոշիկ	353,5	-	-
Հագուստեղեն, գլխարկներ, հովանոցներ	2 090,1	25,3	1,2
Նախկինում օգտագործված հագուստ	30,4	-	-
Ապարատներ և սարքեր	6 139,6	20 461,6	3,3 անգ.
Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ	7 813,3	35 046,6	4,5 անգ.
Դեղորայք և բժշկական տարբեր ապրանքներ	116 249,2	435 356,7	3,7 անգ.
Զանազան շինանյութեր	6 283,9	53 047,1	8,4 անգ.
Տարբեր տեսակի ապրանքներ	18 486,3	112 418,8	6,1 անգ.

2019 թվականի հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մարդասիրական օգնության ծավալն աճել է 4,2 անգամ: Մարդասիրական օգնությունը ստացվել է ՀՀ-ից, ՌԴ-ից, ԱՄՆ-ից և Վրաստանից:

ԱՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ երկրների 2018-2019թթ. հունվար-սեպտեմբերին

	Արժեքը, հազ. դրամ		Տեսակարար կշիռը, %	
	2018թ. հունվար- սեպտեմբեր	2019թ. հունվար- սեպտեմբեր	2018թ. հունվար- սեպտեմբեր	2019թ. հունվար- սեպտեմբեր
Ընդամենը	157 529,2	662 579,4	100,0	100,0
<i>այդ թվում՝</i>				
ՀՀ	112 247,8	350 936,9	71,3	53,0
ՌԴ	32 805,5	83 062,9	20,8	12,5
ԱՄՆ	10 889,1	147 008,8	6,9	22,2
Գերմանիա	935,8	-	0,6	-
Շվեյցարիա	529,6	-	0,3	-
Նիդերլանդներ	121,4	-	0,1	-
Վրաստան	-	81 570,8	-	12,3

Մարդասիրական օգնության ծավալների դինամիկան (հունվար-սեպտեմբերին), ըստ տարիների, հազ.դրամ

